ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԿԱԶՄԵՑ՝ *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ*

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՈՐՈՇՄԱՄԲ:*

գյուղ ԶԻԹՀԱՆՔՈՎ - 2016 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԿԱԶՄԵՑ՝ *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ*

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 24- Ի ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՄԲ:*

գյուղ ԶԻԹՀԱՆՔՈՎ - 2016 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ
1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.11. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
1.12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
1.17.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
1.19. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
2.1.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱՋՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
2.2.ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
3.1.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3.2.ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
3.3. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
3.4.ՔԱՌԱՄՅԱ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
3.6ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
3.7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ
5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձիթհանքով համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիներին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է ՀՀ Շիրակի մարզի Ձիթհանքովի համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

Ինչ է համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման և համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանների արդյունքում: Այն կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության, լեռնային բնակավայրերի զարգացմանն ու աղքատության կրճատմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինասական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, հնարավոր ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման պայմանները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիլ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թուրքական դարավոր բռնատիրությունից ազատագրվելու համար 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին բնակավայրի նախնիները Արևմտյան Հայաստանից զանգվածաբար գաղթել են Արևելյան Հայաստան: Դա մի տեղաշարժ է եղել անկախությունը կորցրած հարազատ հայրենիքի մի վայրից մյուսը:

1829 թվականի սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլիսի հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանը միանալով Ռուսաստանին՝ կարողացավ ապահովել իր խաղաղ գոյակցությունը:

Ըստ տոհմագրական տվյալների՝ գյուղը հիմնադրել է 1793-1795 թվականներին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բասենի և Կարսի գավառներից գաղթած ընտանիքների կողմից: 1918թ. գյուղում բնակություն են հաստատել 70 գաղթական ընտանիք:

Թուրքերը իրենց տիրապետության սահմաններում թուրքացրել են տեղանունները՝ անկախ բնակավայրի էթնիկական կազմից: Ձիթհանքովը մինչև 18-րդ դարի վերջը անվանվել է Բազիրխան:

1884 թվականին գյուղում հիմնադրվել է ծխական դպրոց, 19-րդ դարասկզբին կառուցվել և գործել են սրբատաշ տուֆ քարից կառուցված Ս.Աստվածածին առաքելական և կաթողիկե եկեղեցիները, որոնք մինչև օրս պահպանվել են:

1915-1920-ական թվականների թուրք հրոսակների արշավանքների հետևանքով Արևելյան Հայաստանի գյուղերի ու քաղաքների մեծ մասը կողոպտվել ու ավերվել են: 1918 թվականին նշված հրոսակախմբերը մեծ ոճրագործություններ են իրականացրել Կարսում, Շիրակում, Լոռի-Փամբակում և Հայաստանի այլ շրջաններում:

Այդ ողբերգական, արյունալի էջերից անմասն չի մնացել Ձիթհանքով գյուղը:

Գյուղը մեծ սիրով ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված ավելի քան 300 արևմտահայ գաղթական ընտանիքների: 1918թվականի մայիսի վարջին Շիրակի գավառի

ավելի քան 20 գյուղերի և Արևմտյան Հայաստանից փախած ու այդ գյուղերուում ապաստան գտած հազարավոր հայ տղամարդկանց հավաքում են Ձիթհանքով գյուղում և նրա բնակիչների հետ միասին անողոքաբար սրի քաշում: Թուրք փաշաների վայրագությունը հասնում է այն աստիճանի, որ մասսայական գնդակահարությունների ժամանակ կենդանի մնացած վիրավորների համար խնայելով փամփուշտները, նրանց լցնում են գյուղում եղած չորս մարագները և դաժանորեն այրում: Այդ վայրում ներկայումս կանգնեցված է հուշարձան-խաչքար: Եղեռնի 100-ամայա տարելիցին ընդառաջ 2015 թվականին նախատեսված է այդ տեղում կանգնեցնել ևս մեկ հուշարձան-խաչքար:

Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության՝ տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում: Բնակավայրի տարածքում պահպանվել են պատմամշակութային տասնյակ արժեքներ:

ԲՆակավայրի հիմնադրումից ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել և մնում է հողագործությունն ու անասնապահությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են թռչնաբուծությամբ, մեղվապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: 1850-ական թվականներին գյուղում կառուցվում է ձիթհանք, որտեղից հանված կտավատի ձեթը մեծ համբավ ու ճանաչում է ունեցել տարածաշրջանում: Այդ ճանաչումն է պատճառ հանդիսացել բնակավայրի՝Ձիթհանքով՝ վերանվանման համար:

Բնակավայրն իր զարգացումն հիմնականում ապրել է 1930-ական թվականներից հետո: Գյուղում կառուցվել է միջնակարգ դպրոց, ակումբ, մանկապարտեզ, գրադարան, հիվանդանոց-ծննդատուն, կենցաղի տուն, փոստի բաժանմունք, առևտրի և սպասարկման տարբեր օբյեկտներ: Կայուն տնտեսական աճ է ունեցել Ձիթհանքովի կոլեկտիվ տնտեսությունը: Այն աչքի է ընկել հատկապես անջրդի պայմաններում բարձր բերքատվությամբ և որակի ցորենի արտադրությամբ:

Գյուղի վարելահողերի գերակշռող մասը լեռնատափաստանային սևահողեր են, որի ոռոգման, պարարտացման և ագրոտեխնիկական կանոնների ճիշտ կիրառման դեպքում կարող է ապահովվել հացահատիկի և բանջարաբոստանային մշակաբույսերի կայուն և բարձր բերքատվություն:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Ձիթհանքովի միջնակարգ դպրոցը բոլոր ժամանակներում ունեցել է բարի ավանդույթներ և ուսման բարձր առաջադիմություն: Յուրանքանչյուր տարի, դպրոցի տասնյակից ավելի շրջանավարտներ տեղ են զբաղեցրել հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Սակայն բնակչության ներկայիս սոցիալական վատ պայմանների պատճառով քչերին է հաջողվում իրենց երեխաներին բարձրագույն կրթության տալ:

Համայնքը գիտության, մշակույթի և արվեստի ոլորտներում տվել է տասնյակ նշանավոր մարդիկ:

Համայնքի նշանավոր մարդկանցից են՝

- Հակոբ Մովսես /Հակոբ Մովսոսի Հակոբյան/ – գրող-հրապարակախոս, թարգմանիչ, ՀՀ մշակույթի նախարար՝1994-1998թթ,

Մայրամ մարտիրոսյան -սոցիալիստական աշխատանքային հերոս

Ձիթհանքովը ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Հայրենական Մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատամարտին:

Հայրենական Մեծ պատերազմում գյուղն ունեցել է 106 զոհ, որոնց հիշատակին է նվիրված բնակավայրի կենտրոնական մասում, բարձր բլրակի վրա 1975 թվականին կանգնեցված հուշարձան կոթողը:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի շուրջ 40 կամավորներ, զոհվել են՝ 2-ը:

1887թվականից Ձիթհանքովը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921թ. բնակավայրը ընդգրկվել է Խորհրդային Հայաստանի կազմում և մինչև 1950թ. ընդգրկված է եղել Թալինի շրջանի վարչատարածքային կազմում, իսկ 1950-1996 թվականներին՝ Անիի շրջանի կազմում: 1996 թվականին Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո Ձիթհանքովը, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Ձիթհանքովի գյուղական համայնքը տեղաբաշխված է Արագած լեռան արևմտյան ստորոտում, Շիրակի դաշտի հարավ-արևմտյան և Թալինի սարավանդակի հյուսիսային մասում:

Հյուսիսից սահմանակից է ՀՀ Շիրակի մարզի Քարաբերդի, արևելքից՝ Լանջիկի, արևմուտքից Բագրավանի և Սարակապի, իսկ հարավից ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Մաստարայի և Զարինջայի համայնքների վարչական տարածքներին:

Բնակավայրի տարածքը ծովի մակերևույթից գտնվում է 1750 մետր բարձրության վրա և ընդգրկված է հանրապետության լեռնային բնակավայրերի ցանկում:

Տարածքին առանձնահատուկ են ցուրտ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 10 - 15 աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-500մմ, որոնք առանձնահատուկ են ապրիլ-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Բնակավայրի հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ, ցրտահարությամբ և տնական երաշտով: Տարածշրջանը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Հիշարժան են 1926 և 1988թթ. աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը զբաղեցնում է 2577.1 հա, որից 2393.6 հա գյուղատնտեսական նշանակության հողերն են, հանքավայրերի հողերը կազմում են 9.6 հա, արդյունաբերական, արտադրական նշանակության հողերը 18.3հա, պատմամշակութային հողերը՝ 34.7 հա, իսկ մնացածը՝ ճանապարհների, կոմունալ ենթակառուցվածքների, ընդհանուր օգտագործման, ջրային և այլ նշանակության հողերն են:

Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 82.8հա.:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 12 կմ, մարզկենտրոնից 40 կմ. և մայրաքաղաքից՝ 105 կմ. հեռավորության վրա: Բնակավայրից 5 կմ հեռավորությամբ է անցնում Գյումրի-Երևան միջպետական նշանակության ճանապարհը: Բնակավայրը երկաթուղային կայարանից գտնվում է 12կմ հեռավորության վրա:

Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆ քարով, շինարարական ավազով ու կավով:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ տոհմագրական տվյալների՝ Ձիթհանքով գյուղը հիմնադրվել է 1793-1795 թվականներին Արևմտյան Հայաստանի Ղարսի և Մուշի գավառներից գաղթած ընտանիքների կողմից: Հետագայում գյուղը համալրվել է 1915 թվականի եղեռնից փրկված գաղթական ընտանիքներով: Բնակավայրը հիմնականում զարգացում է ապրել Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետ: Մինչև Հայրենական Մեծ պատերազմը գյուղն ունեցել է 300 տնտեսություն՝ շուրջ 2000 բնակչությամբ:

Հայրենական Մեծ պատերազմից հետո գյուղի բնակչության թիվը կտրուկ նվազել է: Հետպատերազմյան ժամանակաշրջանում համայնքը առավելագույն բնակչություն՝ շուրջ 1600 մարդ է ունեցել 1980-1985 թվականներին:

Վերջին 20 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է շուրջ 300 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել է կրկնակի չափով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 15-20 տոկոսը մեկնում են սեզոնային արտագնա աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 1528
  Այդ թվում՝ տղամարդ - 792, կին՝ - 736,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 375,
- Առկա բնակչություն – 1490,

Այդ թվում՝ տղամարդ - 770 կին՝ - 720,

- Տնային տնտեսությունների քանակը – 375,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 347,

Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)

- Հայ – 1487,
- Ռուս – 3:

Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի /մարդ/

որից՝ մինչև 1 տարեկան – 18
1-2 տարեկան – 42
3-4 տարեկան – 53
5-6 տարեկան – 54
Մինչև 6 տարեկան - 140
7-10 տարեկան – 76
11-14 տարեկան - 71
15-17 տարեկան - 78
Մինչև 16 տարեկան – 340
Մինչև 18 տարեկան - 392
18-22 տարեկան – 145,
23-45 տարեկան – 500,
46-64 տարեկան – 273:
63 և ավելի տարեկան՝ 180

- ***Համայնքի ընտրողների թիվը - 1054:***

Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)

- Ծնունդ - 18,
  Որից կենդանի ծնունդ – 18,
- Մահ – 8,
- Ամուսնություն – 7,
- Ամուսնալուծություն – 0:

Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Հաշմանդամներ – 68, այդ թվում կանայք՝ 9,
  որից՝ հաշմանդամ երեխա – 4,
- Միակողմանի ծնողազուրկ երեխա - 4,
- Առանց ծնողական խնամքի մնացած՝ 3,
- Ամուսնալուծված անձի երեխա – 3.
- Կենսաթոշակառուներ – 180,
- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 12,
- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 58,

Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-16 տարեկան/ – 36,

- Միայն կենսաթոշակառուներից կազմված /65 և ավելի տարեկան/ - 10,
- Հաշմանդամ երեխա ունեցող – 4,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 108,
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 82:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 615,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 20,
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում,մասնավոր – 14,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 53,
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 11,
- Աշակետտներ /16 տարեկան և բարձր/ - 45,
- ՈՒսանողներ – 15,
- Բանակում ծառայողներ – 22,
- Չունեն զբաղվածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 340,

Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների

- Գյուղատնտեսություն – 615,
- Հանքագործական արդյունաբերություն – 2,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 3,
- Շինարարություն – 95,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 5,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 47,
- Տրանսպորտ և կապ – 1,
- Տեղական ինքնակառավարում – 6,
- Կրթություն – 33,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ –1,
- Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում - 2:

Միգրացիա /2016 թվականի ընթացքում/

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը – 8,
  որից՝ Հայաստանում այլ բնակավայր՝ 5:
- Արտերկիր՝ 0:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը՝ 7,
- որից Հայաստանի այլ բնակավայրերից՝ 7:
- Արտա·նա աշխատանքի մեկնողների թիվ 220 մարդ՝ 24 տնային տնտեսություններից:

Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի

- Տարրական – 6,

- հիմնական – 245,
- միջնակար· -640,
- միջնակար· մասնա·իտական – 185,
- բարձրա·ույն - 74:

1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 7 անդամ/ և համայնքի ղեկավար: 2013 թ. դեկտեմբերի 8-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով, համայնքի ղեկավար է վերընտրվել Հովիկ Պողոսյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է գյուղապետարանի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Հայեցողական պաշտոններ

- Համայնքի ղեկավարի տեղակալ – 1 միավոր:

Համայնքային ծառայության պաշտոններ՝

- Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,
- Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ – 1 միավոր,
- Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ – 1 միավոր:

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

- Հավաքարար - 1 միավոր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը	Լիազորություն-ների ստանձնման ժամկետը	Որերրորդ անգամն է ընտրվել
1.	ԻՍՊԻՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՄԵՐՅՈՇԱՅԻ	1958թ.	Միջնակարգ	անկուսակցական	02.10.2016թ.	2
2.	ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏԻ	1947թ.	Միջնակարգ	անկուսակցական	02.10.2016թ.	4

3.	ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆԻ	1946թ.	Բարձրագույն	անկուսակցական	02.10.2016թ.	2
4.	ՀԱԿՈԲՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ	1967թ.	Միջնակարգ	անկուսակցական	02.10.2016թ.	2
5.	ՌԱՖԱԵԼՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՄԻՇԱՅԻ	1978թ.	Միջնակարգ	անկուսակցական	02.10.2016թ.	2
6.	Բեյբության Ֆլորա Գեվորգի	1983թ.	Բարձրագույն	անկուսակցական	02.10.2016թ.	1
	Հունանյան Թագուհի Սամվելի	1986թ.	Մասնագիտական	անկուսակցական	02.10.2016թ.	1

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքների համաձայն համայնքի ղեկավարի կողմից ձևավորվել է աշխատակազմ հետևյալ կազմով՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԿԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Ազգանուն, անուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Տոկոսը համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ /%/
Հայեցողական պաշտոններ							
1.	Բալաբեկյան Տարիել	1946թ.	բարձրագույն	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	132000	64.4
Համայնքային ծառայության պաշտոններ							
2.	Ղազարյան Հունան	1958թ.	բարձրագույն	Աշխատա-կազմի քարտուղար (1.2-1)	1	166000	80.9
3.	Բեյբության Ռաֆիկ	1980թ.	բարձրագույն	Առաջատար մասնագետ-հաշվապահ (3.1-1)	1	135000	65.8
4.	Հարություն-յան Մելանյա	1958թ.	միջնակարգ մասնագիտա-	Առաջին կարգի մասնագետ	1	100000	48.7

			կան	(3.2-1)			
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ							
5.	Քոչարյամ Մարիետա	1958	Միջնակարգ	Հավաքարար	1	62000	30.2

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են մշտական գործող հետևյալ հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով,
- Անչափահասների հարցերի հանձնաժողով,
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,
- Սոցիալական ապահովության հարցերի հանձնաժողով:

1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 1997 թվականի մարտի 14-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> թիվ 51 որոշմամբ և իրավական այլ ակտերով:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի:

Հիմնական նորոգման կարիք ունի ջրամատակարարման ներքին ցանցը, ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհները: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի բնակավայրի գիշերային լուսավորության համակարը: Համայնքը չունի գյուղապետարանի առնձնացված շենք և օգտագործում է համայնքային կենտրոնի 3 աշխատասենյակները: Բնակավայրը չունի մանկապարտեզ, համայնքային ենթակայության մարզական կամ երաժշտական դպրոցներ, հանգստի գոտի և ազատ ժամանցի հարմարություններ:

<<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> և <<Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության>> ծրագրերի շրջանակներում 2009թ. գազիֆիկացվել է բնակավայրը, առանձին թաղամասերում կա ցանցի ընդլայնման անհրաժեշտություն:

Համայնքի բյուջեի, պետական բյուջեից կատարված հատկացումների և ներգրավված այլ միջոցներով 2010-2013 թթ. վերանորոգվել է համայնքային կենտրոնի շենքը /նախկին մշակույթի տուն/, անցկացվել է լոկալ ջեռուցման համակարգ և հագեցվել է անհրաժեշտ գույքով և հանդերձանքով, մասնակիորեն կառուցապատվել է կից հանգստի գոտին: Անցած 3 տարիներին իրականացվել են նաև ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, նորացվել են խմելու ջրի ներտնտեսային ցանցի առանձին հատվածների խողովակաշարերը, վերանորոգվել է Ս. Աստվածածին եկեղեցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿԸ

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Հաշվեկշռա-յին ընդհանուր արժեքը / դրամ/	Գույքի տեխնիկական վիճակի նկարարգրությունը
1	Մթերքի պահեստ	հատ	1	154 405	154 405	գտնվում է քայքայված վիճակում և չի օգտագործվում
2	Հացահատիկի պահեստ	հատ	1	3 076 888	3 076 888	գտնվում է անսարք վիճակում և չի օգտագործվում
3	Կենցաղի տուն	հատ	1	941 000	941 000	գտնվում է քայքայված վիճակում և չի օգտագործվում
5	Համայնքային կենտրոնի շենք	հատ	1	9 212 295	9 212 295	Վերանորոգված է և շահագործվում է
7	Ներհամայնքային փողոցներ	կմ	20	x	x	գտնվում են անբարեկարգ վիճակում
	Գյուղապետարանի գույք					
10	Համակարգիչ	հատ	1	300 000	300 000	գտնվում է սարքին վիճակում և օգտագործվում է
11	Համակարգիչ	հատ	1	310 000	310 000	գտնվում է սարքին վիճակում և օգտագործվում է
12	Մոնիթոր	հատ	1	110 000	110 000	գտնվում է սարքին վիճակում և օգտագործվում է
13	Պահարան երկաթյա	հատ	2	8 870	14 192	Օգտագործվում է
14	Ավտոմեքենա ՏԱՅՕՏԱ ՀԱՌՌԻԵՌ 2.4	հատ	1	4 300 000	4 300 000	գտնվում է սարքին վիճակում և օգտագործվում է

	Գրադարանի գույք					
1	Երկաթյա գրադարակ	հատ	26	40 392	1 050 192	գտնվում է սարքին վիճակում և օգտագործվում է
2	Գրադարակ	հատ	4	11 216	44 864	գտնվում է սարքին վիճակում և օգտագործվում է
4	Քարտարկղ	հատ	1	2 155	2 155	գտնվում է սարքին վիճակում և օգտագործվում է
9	Հեռախոսի					գտնվում է

	ապարատ	հատ	1	392	392	անսարքին վիճակում և չի օգտագործվում է
10	Գրքային ֆոնդ	հատ	7031	x	x	Հիմնական մասը գտնվում է խոնացած և քայքայված վիճակում
Համայնքային կենտրոնի գույք						
1	Սեղան փոքր	հատ	2	1 380	2 760	գտնվում է կոտրված վիճակում
2	Վարագույր	հատ	1	24 380	24 380	գտնվում է քայքայված վիճակում
3	Կուլիսներ	հատ	8	10 170	81 360	գտնվում է քայքայված
5	Կտավներ	հատ	12	11 408	136 896	գտնվում են բարվոք վիճակում
6	ձայնարգիչ	հատ	2	45000	90000	Լավ վիճակում
7	Գրասեղան	հատ	3	115000	345000	Լավ վիճակում
8	Գրապահարան	հատ	3	45000	135000	գտնվում է լավ վիճակում
9	Դահլիճի աթոռներ	հատ	250	18900	4625000	Լավ վիճակում
10	Ուժեղացուցիչ	հատ	1	150000	150000	գտնվում է լավ վիճակում
11	Դալիճի սեղան	հատ	30	64500	1935000	Լավ վիճակում
12	Սպերտային գույք	հատ	25	592000	592000	Լավ վիճակում
13	Ջեռուցման կաթցա	հատ	1	850000	850000	Լավ վիճակում
14	Աթոռ գյողապետարանի	հատ	27	18000	486000	Լավ վիճակում
15	հեռուստացույց	հատ	1	275000	275000	Լավ վիճակում
16	Փողոցների լոսավորություն	հատ	32	100000	3200000	Լավ վիճակում

1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և արտաքին ջրերի հեռացման համակարգեր: Հեղեղատարի բացակայության պատճառով բնակավայրի առանձին թաղամասեր գարնան ձնհալի ժամանակահատվածում վտանգված են հեղեղումների:

Համայնքը կոյուղացված չէ և կեղտաջրերի հեռացումը կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից կամ համայնքում կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով: Բնակավայրը նպատակային նշանակության աղբատեղի չունի:
Սակավ է համայնքի կանաչապատ և ծառատունկ տարածքները: Բնակավայրը չունի կառուցապատ հանգստի գոտի, հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի աղտոտվածությունը փոշուց:
Բնակավայում վտանգավոր արտանետումներ չկան:

1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում առկա է համայնքի բնակչության սեփականությունը հանդիսացող 270 անհատական առանձնատուն՝ 33850ք.մ ընդհանուր մակերեսով: Բնակավայրը գտնվելով 1988թ. <<Սպիտակի>> աղետալի երկրաշարժի գոտում, համայնքի բնակֆոնդի մոտ 30%-ը ունեն 2-4 աստիճանի վնասվածություն: Երկրաշարժի հետևանքով անօթևանի կարգավիճակ ունեն 21 ընտանիք, որոնք շուրջ 22 տարի է ինչ բնակվում են վագոն-տնակներում և հարմարեցված կացարաններում: Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի թվով 40 երիտասարդ ընտանիքներ:
Համայնքում կա 18 բնակելի առանձնատների անավարտ շինարարություն, որոնց շինարարությունը սկսվել է երկրաշարժից հետո և միջոցների բացակայության պատճառով մինչև օրս չի ավարտվել:

Համայնքի բնակարանային տնտեսությունն ունի հետևյալ տեսքը՝

Հ/հ	Բնակարանային տնտեսության բնութագրիչներ	Շենքերի քանակը /հատ /	Բնակա-րանների /բն.տների/ քանակը / հատ /	Ընդհանուր բնակմակերեսը / քառ.մ. /
1	Համայնքային սեփականության բազմաբնակարան բնակելի շենքեր	-	-	-
	1 սենյականոց բնակարաններ	-	-	-
	2 սենյականոց բնակարաններ	-	-	-
	3 սենյականոց բնակարաններ	-	-	-
	4 և ավել սենյականոց բնակարաններ	-	-	-
2	Կառուցման ժամկետները	-		
	Մինչև 10տարի առաջ կառուցված	-	-	-
	11-20տարի առաջ կառուցված	-	-	-
	21-50տարի առաջ կառուցված	-	-	-

	50 և ավելի տարի առաջ կառուցված	-	-	-
3	Անհատական առանձնատներ	270	270	33850
	Ընդհանուր միջին մակերեսը	x	x	125.4
	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆԱԿՖՈՆԴ	270	270	33850

1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համայնքի խմելու ջուրը մատակարարվում է Արագած լեռան բնական աղբյուրներից սնվող Թալինի մայր ջրատարից՝ ինքնահոս եղանակով, 4 լիտր/վրկ. հզորությամբ: ԲՆակչության խմելու ջրով ապահովվածությունը կազմում է 50-70տոկոս: Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է 500 խ.մ. տարողության օրական կարգավորման ջրամբարի և 20 կմ ընդհանուր երկարության ներտնտեսային ցանցի միջոցով: Համայնքի սեփականություն հանդիսացող խմելու ջրի համակարգը անժամկետ, անհատույց պայմաններով շահագործման և սպասարկման է հանձնված <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի Թալինի մասնաճյուղին:

Համայնքի ներկայիս շահագործվող ներտնտեսային ցանցը կառուցվել է 1950-1960թթ. և ցանցի առանձին հատվածների քայքայվածության պատճառով հաճախակի են ջրագծի վթարները, ջրի կորուստները և աղտոտումները: Բնակավայրի ծայրամասային բնակելի տները և նորակառույց թաղամասը ապահովված չեն խմելու ջրով:

Ջրամատակարարման ներքին ցանցի, օրական կարգավորման ջրամբարի վերանորոգման աշխատանքները սկսվել են այս տարի կառուցվում է տասնհինգ կիլոմետր ներքին ցանց և մեկ ջրամբար: Համայնքում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու համար անհրաժեշտ է ավելացնել բնակավայր մղվող ջրի քանակությունը 4լ/վրկ – ով:

Խմելու ջրի որակը, որը պարբերաբար ուսումնասիրվում է հակահամաճարակային հսկողության ծառայության կողմից, բնութագրվում է բավարար և խմելու համար պիտանի: Պարբերաբար կատարվում են օրական կարգավորման ջրամբարի քլորացում:

Համայնքը չունի ոռոգման համակարգ:

Բնակավայրից 15կմ հեռավորության վրա է գտնվում Ախուրյանի ջրամբարը: Պոմպակայանի տեղադրման և ոռոգման համակարգի կառուցման դեպքում ջրամբարի ջրային ռեսուրսները կարող են օգտագործվել համայնքի ոռոգման կարիքների համար:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

ԲՆակավայրը Գյումրի-Երևան մայրուղուց գտնվում է 6 կմ, Մարալիկ քաղաքից՝ 12 կմ, մարզկենտրոնից՝ 40կմ, իսկ մայրաքաղաքից՝ 105 կմ հեռավորության վրա: Մոտակա երկաթուղին Մարալիկի կայարանն է, որը բնակավայրից գտնվում է 12 կմ հեռավորության վրա:

Բնակավայրում կա փոստային բաժանմունք, ունի <<ԱՐՄԵՆՏԵԼ>>-ի ալեհավաքային տեղական հեռախոսակապ, բնակչությունը օգտվում է նաև <<ԱՐՄԵՆՏԵԼ>>, <<ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ>> և <<ՕՐԱՆԺ>> բջջային հեռախոսակապերից:

Քայքայված և անբարեկարգ վիճակում է Ձիթհանքով-Քարաբերդ-Մարալիկ Ձիթհանքով-Զարինջա, Ձիթհանքով-Լանջիկ միջհամայնքային ճանապարհները: Չնայած նրան, որ 2013 թվականին պետական բյուջեի միջոցներով կատարվեցին Ձիթհանքով-Քարաբերդ-Մարալիկ միջհամայնքային ճանապարհի առանձին հատվածների մասնակի վերանորոգման աշխատանքներ, սակայն ճանապարհի մեծ մասը շարունակում է մնալ քայքայված և անբարեկարգ:Սակայն 2016թ. ամբողջովին կառուցվում է նշված ճանապարահատվածը:

Ներհամայնքային շուրջ 30 կմ. ընդհանուր երկարության ճանապարհները նույնպես գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում:

Քայքայված վիճակում են նաև համայնքի դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր, որի հետևանքով լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղտնտեսական աշխատանքների կառարման ընթացքում:

Խիստ անբավարար է համայնքի հեռուստահաղորդումների որակը: Բնակավայրը ընդունում է միայն Հ 1 հանրային հեռուստահաղորդումները:2016թ. կառուցվեց նոր հեռուստաաշտարակ,որը բարելավեց հեռուստաալիքների որակը:

Բնակավայր-Մարալիկ-Գյումրի տրանսպորտային կապն ապահովվում է միկրոավտոբուսի և ավտոբուսի 2-ական երթուղիների միջոցով: Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապն ապահովվում է Գյումրի և Մարալիկ քաղաքների երթուղիների միջոցով:

Անձնական սեփականության տրանսպորտային միջոցներով ապահովված են համայնքի տնտեսությունների 40 տոկոսը:

1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է, որը սակայն չի հանգեցրել սոցիալական այնպիսի ինստիտուտների ձևավորմանը, ինչպիսիք են միությունները, միավորումները, նախաձեռնող խմբերը և այլն:

Բնակչությունը սերտ կապեր ունի մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, հանրապետական և միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Համայնքը անդամակցում է <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը, համագործակցության սերտ կապ է հաստատել <<Կարիտաս>> բարեսիրական կազմակերպության հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի և Հայ Կաթողիկե եկեղեցու հետ:

1.11. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2577.06 հա. է, որից `

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր – 2393.63 հա.

այդ թվում`

- վարելահող - 1533.82 հա., որից քաղաքացիներին սեփականություն՝ 1401.11հա
- արոտ - 777.03 հա.
- գյողատնտեսական նշանակության այլ հողեր - 82.78 հա.

2. Բնակելի կառուցապատման տակ հողեր – 85.59 հա.
3. Գյուղատնտեսական արտադրական շինությունների տակ հողեր – 18.27 հա.
4. Հանքավայրերի հողեր – 9.60 հա.
5. Ճանապարհների տակ հողեր - 2.52 հա.
6. առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր – 34.7 հա.
7. Անտառային և ջրային ֆոնդի հողեր – 0.9 հա.
8. Հասարակական կառուցապատման, ընդհանուր օգտագործման կոմունալ ենթակառուցվածքների հողեր – 31.9 հա.
9. Պետական սեփականության հողերը կազմում են – 46,77 հա

1991 թվականին Չիթհանքովի կոլտնտեսության լուծարումից հետո, համայնքում իրականացված վարելահողերի սեփականաշնորհման արդյունքում 1401.1 հա վարելահողը, մեկ հողաբաժինը՝ 1.8 հա չափաբաժնով, սեփականաշնորհվել է համայնքի տնտեսություններին, իսկ 132.7 հա վարելահող թողնվել է համայնքին՝ սեփականության իրավունքով, որոնք համայնքի 72 տնտեսությունների կողմից օգտագործվում են վարձակալությամբ: Մեկ տնտեսության կողմից համայնքում միջին հաշվով մշակվում է 5.1 հա վարելահող: Համայնքի գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվում է նաև 777,03 հա համայնքի սեփականանության վարելահող:

Համայնքի հողային հաշվեկշիռը 2016 թվականի հունիսի 1-ի դրությամբ ունի հետևյալ տեսքը՝

Üá³ï³ÏÛÇÝ ÜÏß³ÝÝáõÃÛáõÝ	ÐáÕ³ï»ëù, ·áñÍ³éÝ³Ï³Ý Ýß³Ý³ÏáõÃÛáõÝ	ÀÝ¹³Ù»ÝÁ	ê»÷³Ï³ÝáõÃÛ³Ý ëáõµÛ»Ïï									
			ÐÐ ù³Õ³ù³óÇÝ»ñÇ	ÐÐ Çñ³ï³µ³Ýï³ï³Ý ³ÝÓ³ÝÓó	Ñ³Ù³ÛÝù³ÛÇÝ				å»ï³Ï³Ý			
					ÁÝ¹³Ù»ÝÁ	ïñí³Í³ÝÑ³ïáõÛó ù·ï³·áñÍÙ³Ý	ïñí³Í ï³ñÓ³ï³ÉáõÃÛ³Ý	ù·ï³·áñÍÙ³Ý ¨ ï³ñÓ³ï³ÉáõÃÛ³Ý ãïñí³Í	ÁÝ¹³Ù»ÝÁ (9+10+11)	ïñí³Í ³ÝÑ³ïáõÛó ù·ï³·áñÍÙ³Ý	ïñí³Í ï³ñÓ³ï³ÉáõÃÛ³Ý	ù·ï³·áñÍÙ³Ý ¨ ï³ñÓ³ï³ÉáõÃÛ³Ý ãïñí³Í
²	´	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. ¶ÛáõÕ³ïÝï»ë³Ï³Ý	í³ñ»É³ÑáÕ	1533,82	1401,11		132,71			132,71				
	µ³½Ù ïÝÏ³ñÏÝ»ñ, ÁÝ¹³Ù»ÝÁ											
	³Û¹ ÃíáõÙª åïÕ³ïáõ ³Û·Ç											
	Ë³ÕááÇ ³Û·Ç											
	³ÛÉ µ³½Ù³ÙÛ³											
	ËáïÑ³ñù											
	³ñáï	777,03			777,03		0,02	777,01				
	³ÛÉ ÑáÕ³ï»ëù»ñ	82,78			82,78			82,78				
	ÀÝ¹³Ù»ÝÁ	2393,63	1401,11		992,52		0,02	992,50				
2. ´Ý³ï³ï³ Ûñ»ñÇ	µÝ³Ï»ÉÇ Ï³éáõó³å³ïÙ³Ý	85,59	80,85		4,74			4,74				
	³Û¹ ÃíáõÙª ïÝ³Ù»ñÓ	80,85	80,85									

	ÑáÕ»ñ											
	³Û·»·áñÍ³Ï³Ý (³Ù³é-Ý)											
	Ñ³ë³ñ³Ï³Ï³Ý Ï³éáõó³å.	3,15	0,05		0,63			0,63	2,47			2,47
	Ë³éÁ Ï³éáõó³å³ïÙ³Ý											
	ÁÝ¹Ñ³Ýáõñ û·ï³·áñÍÙ³Ý	8,27			8,27			8,27				
	³ÛÉ ÑáÕ»ñ	20,06			20,06			20,06				
	ÀÝ¹³Ù»ÝÁ	117,07	80,90		33,70			33,70	2,47			2,47
3.²ñ¹ÛáõÝ³µ., ÁÝ¹»ñùû·ïաqnրdաև ³ÛÉ ³ñï. ÝßáõÝ³ïáõÃ. ûµեկտների	³ñ¹ÛáõÝ³µ»ñáõÃÛ³Ý											
	·ÛáõÕïÝï»ë³Ï³Ý, ³ñï³¹ñական	18,27			18,27			18,27				
	å³Ñ»ëï³ñ³Ýներ											
	ÁÝ¹»ñùû·ï³·áñÍ-Ù³Ý	9,60							9,60		9,60	
	ÀÝ¹³Ù»ÝÁ	27,87			18,27			18,27	9,60		9,60	
4.¾Ý»ñ·»ïÇÏ³ÛÇ, ïñ³Ýëåáñïç, ï³åÇ, ÏáÙáõÝ³É »ÝÃ³Ï. ûµեկտների	¾Ý»ñ·»ïÇÏ³ÛÇ											
	Ï³åÇ	0,18			0,18			0,18				
	ïñ³Ýëåáñïç	2,52							2,52			2,52
	ÏáÙáõÝ³É »ÝÃ³Ï³éáõóí³Íù	0,20			0,20			0,20				
	ÀÝ¹³Ù»ÝÁ	2,90			0,38			0,38	2,52			2,52
5. Ð³ïáõÏ å³Ñå³Ýïáõ ï³ñ³ÍùÝ»ñÇ	µÝ³å³ÑÑå³Ý³Ï³Ý											
	³Û¹ ÃíáõÙª ³ñ·»ÉáõÝ»ñ											
	³ñ·»É³í³Ûñ»ñ											
	³½·³ÛÇÝ å³ñÏ»ñ											
	³éáÕç³ñ³ñ³Ï³Ý											
	Ñ³Ý·ëïÇ											
	å³ïÙ³Ï³Ý ¨ ÙßáõÃ³ÛÇÝ	34,72			2,54			2,54	32,18			32,18
	ÀÝ¹³Ù»ÝÁ	34,72			2,54			2,54	32,18			32,18
6. ²Ýï³é³ÛÇÝ	³Ýï³é											
	Ã÷áõï											
	í³ñ»É³ÑáÕ											
	ËáïÑ³ñù											
	³ñáï											
	³ÛÉ ÑáÕ»ñ											
	ÀÝ¹³Ù»ÝÁ											
7. æñ³ÛÇÝ	·»ï»ñ											
	çñ³Ùµ³ñÝ»ñ											
	É×»ñ											
	çñ³ÝóùÝ»ñ	0,53			0,53			0,53				
	ÑÇ¹ñáï»Ë. ¨ çñïÝï. ³ÛÉ ûµ.	0,34			0,34			0,34				
	ÀÝ¹³Ù»ÝÁ	0,87			0,87			0,87				
ÀÜ¸²ØºÜÀ ÐàÔºð		**2577,06**	**1482,01**		**1048,28**		**0,02**	**1048,26**	**46,77**		**9,60**	**37,17**

1.12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարածքում գործում են տուֆ քարի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող երկու սուբյեկտներ, որոնց գործունեությունն ունի սեզոնային բնույթ և գերակշռում է ձեռքի աշխատանքը: Քարի արտադրունանման ոլորտում համայնքից զբաղված է 10 մարդ:

Համայնքում առկա է տուֆ քարի մեծ պաշարներ և անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում այս ճյուղը կարող է զարգանալ, ապահովելով զգալի թվով աշխատատեղեր և նպաստել համայնքի զարգացմանը:

1.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղտնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն է:
Ոռոգելի հողատարածքների բացակայության պատճառով համայնքը լուրջ դժվարությունների առաջ է կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու համար:
Կոլտնտեսության լուծարումից հետո, համայնքում կազմավորվել են շուրջ 300 գյուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 1533.8 հա. վարելահող, որից 1401.1 հա. սեփականության, իսկ 132.7 հա-ը վարձակալության իրավունքով: Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարա- բոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Չունենալով ոռոգելի վարելահողեր՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից: Ցանքատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, ցրտահարությամբ և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 30-40 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-100%: Տարածաշրջանում համայնքը աչքի է ընկել անջրդի պայմաններում բարձր որակի ցորենի արտադրությամբ:
Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 624 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 328 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 1422 գլուխ, խոզեր՝ 178 գլուխ, հավեր 2400 թև, մեղվափեթակներ՝ 245 հատ:
Համայնքի բնակչության կողմից սպառվում է ստացված գյուղատնտեսական արտադրանքի մինչև 70 տոկոսը:
Գյուղում կա թրթուրավոր և անվավոր 12 տրակտոր, 6 կոմբայն, 1 խոտհնձիչ, 47 բեռնատար ավտոմեքենա, տասնյակ գյուղ մեխանիզմներ ու գործիքներ: Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:
Գյուղում կա երկու ալրաղաց, որը լիովին բավարարում է բնակչության պահանջները:
Ոռոգման համակարգի կառուցման, հակակարկտային կայանքների տեղադրման, պարարտացման, գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների նորացման դեպքում համայնքի գյուղատնտեսության ոլորտը կարող է կտրուկ զարգանալ՝ ապահովելով բարձր բերքտվություն և տնտեսական կայուն աճ:
Անհրաժեշտ ներդրումներ կատարելու դեպքում համայնքում կարող է զարգանալ նաև այգեգործությունը և գյուղատնտեսական մթերքների վերամշակման ճյուղը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը

Հողատեսքի անվանումը	2013 թվական	
	Քանակը /հա/	Որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղտնտեսական նշանակության հողեր, որից՝	2396.6	2396.6
Վարելահող	1533.8	1533.8
Բազմամյա տնկարկներ	-	-
Խոտհարքներ	-	-
Արոտավայրեր	777.0	777.0
Այլ գյուղատնտեսական հողեր	82.8	25.2

2.Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը

	Ցանկատարածությունների կառուցվածքը	2013 թվական		%-ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /1533.8հա/
		Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա	
1.	*Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝*	*960*	*2.6*	*62.6*
	Ցորեն	690	2.6	X
	Գարի	270	2.6	X
	Այլ հացահատիկային մշակաբույսեր	0.0	0.0	X
2.	*Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում՝*	*280*	*2.0*	*18.2*
	Կորնգան	270	2.0	
	Առվույտ	10.0	2.0	
3.	*Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում՝*	*1.5*	*7.6*	*0.1*
	Կարտոֆիլ	0.8	15.0	X
	Կաղամբ	0.2	10.0	X
	Գազար	0.1	5.0	X
	Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	0.4	1.5	X

4.	*Այլ /ցել/*	*292.3*		*19.1*
	ԸՆԴԱՄԵՆԸ	*1533.8*	*X*	*100.0*

3. Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը /բերքատվություն/

Մշակաբույսի տեսակը	2013 թվական
Հացահատիկ	
Ցանկատարածքը /հա/	960
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	2.6
Համախառն բերքը/տոննա/	2496
Կերային մշակաբույսեր	
Ցանկատարածքը	280
1 հեկտարի միջին բերքատվությունը	2.0
Համախառն բերքը	560
Կարտոֆիլ	
Ցանկատարածքը	0.8
1 հեկտարի միջին բերքատվությունը	15
Համախառն բերքը	12
Կաղամբ	
Ցանկատարածքը	0.2
1 հեկտարի միջին բերքատվությունը	10.0
Համախառն բերքը	2.0
Բանջարաբոստանային այլ մշակաբույսեր	
Ցանկատարածքը	0.5
1 հեկտարի միջին բերքատվությունը	1.5
Համախառն բերքը	0.75

4. Անասնագլխաքանակը

4 Անասնագլխաքանակ

/գլուխ/

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	01.01.2014 թ. դրությամբ
Խոշոր եղջերավոր անասուններ	880
որից՝ կովեր	451
Ոչխարներ և այծեր	1457
Խոզեր	308
Ավանակներ և ջորիներ	8
Ձիեր	5
Թռչուններ	4777
Մեղվաընտանիքներ	268

5.Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	**2013 թ.**
Մսի արտադրություն,տոննա	35.0
Կաթի արտադրություն, տոննա	721.6
Բրդի արտադրություն, տոննա	3.6
Ձվի արտադրություն, հազ. հատ	600 000
1 կովի կաթնատվությունը, կգ	1600
1 ոչխարի բրդատվությունը,կգ	3.0
1հավի ձվատվությունը, հատ	150

6.Համայնքում առկա մարդատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ /առ՝01.01.2014թ. դրությամբ/

Մարդատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ	Չափի միավոր	Քանակը
Մարդատար ավտոմեքենա	հատ	151
Բեռնատար ավտոմեքենա	հատ	13
Ավտոբուս	հատ	0
Միկրոավտոբուս	հատ	0
Աղբահանող մեքենա	հատ	0
Ձյուն մաքրող մեքենա	հատ	0
Թրթուրավոր տրակտորներ	հատ	5
Անվավոր տրակտորներ	հատ	7
Հացահատրկային կոմբայն	հատ	6
Խոտհնձիչ կոմբայն	հատ	1
Տրակտորային կցասայլ	հատ	6
Գութան	հատ	5
Կուլտիվատոր	հատ	4
Շարքացան	հատ	6
Հակավորող մեքենա	հատ	4
Հատիկազտիչ մեքենենա	հատ	1

1.14.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում են 215 աշակերտ: Դպրոցում աշխատում են 24 մանկավարժներ, որից 18-ը ունեն բարձրագույն կրթություն: Դպրոցի շենքը 2007-2011թթ. հիմնական նորոգման է ենթարկվել ՀՀ պետբյուջեի միջոցներով: Դպրոցը հագեցված է անհրաժեշտ գույքով և կահավորանքով:
Համայնքի միակ մշակութային օջախը մշակույթի տունն է, որի կառուցումը սկվել 1938թ. և ավարտվել՝ 1955թվականին: Մշակույթի տանն են տեղակայված գյուղապետարանը, գրադարանը, բուժ. մանկաբարձական կետը, մարզադահլիճը, համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի սրահը և հանդիսությունների դահլիճը:
Համայնքի բյուջեի, պետական բյուջեից կատարված հատկացումների և ներգրավված այլ միջոցներով 2010-2013 թթ. վերանորոգվել է մշակույթի տունը և այն վերակազմավորվել համայնքային կենտրոնի: Անցկացվել է լոկալ ջեռուցման համակարգ, հագեցվել անհրաժեշտ գույքով և հանդերձանքով և մասնակիորեն կառուցապատվել է շինությանը կից հանգստի գոտին:
Բնակավայրը չունի մանկապարտեզի շենք և համայնքի նախադպրոցական տարիքի թվով 39 երեխաներերի, որից 18-ը՝ 3-4 տարեկան, իսկ 21-ը՝ 5-6 տարեկան, նախադպրոսական կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպվում է դպրոցահեն նախակրթարանում, որի պահպանման ծախսերը կատարվում են պետական բյուջեի և համայնքի բյուջեի միջոցներով: Նախակրթարանը ևս հագեցված է անհրաժեշտ գույքով և հանդերձանքով: Համայնքային կենտրոնում գործում են գեղարվեստի և մարզական խմբակները:
Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում <<Մարալիկի առողջության կենտրոն>> Մարալիկի առողջության կենտրոն ՓԲԸ- ի և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով, որը վերանորոգվել է համայնքային կենտրոնի վերանորոգման ծրագրի շրջանակներում

1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Բերրի վարելահողերի առկայությունը.
- Բնակավայրի գազիֆիկացված լինելը.
- Տուֆ քարի մեծ պաշարների առկայությունը.
- Ախուրյանի ջրամբարի մոտ գտնվելը.
- Գյումրի-Արմավիր մայրուղուն մոտ գտնվելը.
- Երկաթուղային կապին մոտ գտնվելը.
- Ինքնահոս խմելու ջրերի առկայությունը.
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի և բանվորական աշխատուժի առկայությունը.
- Արտագնա աշխատանքից ստացվող եկամուտը.
- Համայնքի համախմբվածությունը:

1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգելի վարելահողերի բացակայությունը.
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.

- Հակակարկտային կայանքների բացակայությունը.
- Համայնքի գյուղացիական տնտեսությունների թույլ զարգացվածությունը.
- Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը.
- Որակյալ սերմերի և տոհմային ցեղատեսակների բացակայությունը, պարարտանյութերի, թունաքիմիկատների և բուժանյութերի բարձր գները.
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդին հասցված վնասները.
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները.
- Անօթևանի կարգավիճակ ունեցող 21 ընտանիքների առկայությունը.
- Բնակ. պայմանների բարելավման կարիք ունեցող թվով 40 երիտասարդ ընտանիքների առկայությունը

- Մանկապարտեզի շենքի բացակայությունը.

- Կոյուղու համակարգի բացակայությունը.

- Համայնքի բնակչության աշխատանքային թերբեռնվածությունը և գործազրկության բարձր մակարդակը.
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից.
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները.

1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տուֆ քարի մեծ պաշարների առկայությունը, քարի արտադրության զարգացումը և նոր աշխատատեղերի ստեղծումը.
- Ախուրյանի ջրամբարի ջրային ռեսուրսների բազայի վրա ոռոգման համակարգի կառուցումը և գյուղատնտեսության ոլորտի զարգացումը.
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի միջոցով գյուղմթերքների արտադրության ավելացումը, գյուղ. մթերքների վերամշակման ճյուղի զարգացումը.
- Ներդրումների ավելացման նպատակով տեղական և միջազգային կազմակերպությունների և ներդրումային հիմնադրամների հետ համագործակցության կապերի խթանումը, համայնքում փոքր և միջին ձեռնարկիտիրության զարգացումը:

1.18.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Սեյսմիկ գոտում գտնվելը.
- Կոյուղաջրերի հեռացման համակարգի բացակայությունը..
- Համայնքում բավարար ծառայություններ մատուցելու և հրատապ խնդիրները լուծելու համար բավարար ֆինանսական միջոցների բացակայությունը, համայնքի բնակչության սոցիալական վատ պայմանների պատճառով տեղական հարկերի հավաքագրման դժվարությունները.

- Բնական աղետները /երաշտ, կարկտակարություն, ցրտահարություն, հեղեղավտանգ իրավիճակներ/ և բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից.

1.19. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անցած տարիներին գյուղապետարանի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:
Համայնքում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարհանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության թվով 5 կազմավորումներ:
Համայնքում ստեղծվել և գործում է նաև արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով:
Համայնքում պարբերաբար անցկացվել են քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժություններ:
Սակայն բնակավայրը չունի արտակարգ իրավիճակների չափանիշներին համապատասխան համայնքային կառավարման կենտրոն: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում այն հնարավոր կլինի տեղակայել դպրոցի նկողային հարկում, որը համապատասխան սարքավորումներով և գույքով ապահովելու անհրաժեշտություն կունենա:
Հատկապես անհանգստացնող է համայնքի հանրակրթական դպրոցի և բնակիչների սեփականությունը հանդիսացող առանձնատների նկուղային հարկերի տեխնիկական վիճակը, որը համայքում հաշվառված են որպս ապաստարաններ: Հանրակրթական դպրոցի և նկուղային հարկը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, իսկ բնակիչների սեփականությունը հանդիսացող նկուղային հարկերը օգտագործվում են նրանց տնտեսական կարիքների համար:
Համայնքում արտակարգ իրավիճակների ոլորտում անհրաժեշտ է իրականացվել այնպիսի աշխատանքներ, որոնք նպատակաուղղված կլինեն արտակարգ դեպքերի կանխման, ծայրահեղ դեպքում դրանցից բխող վնասները նվազագույնի հասցնելու և վթարավերականգնողական աշխատանքները շուտափույթ կատարելու համար:
Դրա հնարավոր կլինի հանրակրթական դպրոցի և նախակրթարանի շենքերի նկուղային հարկերի ամրացման-վերականգնման կամ նպատակային նշանակության գազապաստարանի կամ համայնքային կենտրոնի շենքի կառուցման ծրագրերի իրականացմամբ:
Սակայն համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հնարավոր չէ աշխատանքներ իրականացնել նշված ապաստարանների հիմնանորոգման, շարքից դուրս եկած գույքի, սարքավորումների և պաշտպանիչ միջոցների արդիականացման, նյութատեխնիկական բազայի ընդլայնման և այլ հրատապ խնդիրների լուծման համար:

ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ

Համայնքում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացող հեղեղումները, քարաթափերը, ձնաբուքը, կարկտահարությունները, ցրտահարությունները և ուժեղ քամիները :

Համայնքի հեղեղավտանգ տեղամասի նկարագրությունը՝

<u>թիվ 1 փողոց</u>

22 բնակելի տներ, 36 օժանդակ կառույցներ, 2.2 հա տնամերձ հողամասեր,

Քարաթափման վտանգավոր տեղամասերի նկարագրությունը՝

Բնակավայրի հյուսիս- արևելյան թաղամասի թվով 28 բնակելի տները և օժանդակ կառույցները:

ՏԵԽՆԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐ

Համայնքում տեխնածին բնույթի վտանգներն են՝

- երկրաշարժի հետևանքով 3-4-րդ աստիճանի վթարայնություն ունեցող շենքերի ու շինությունների հնարավոր փլուզումները,
- ավտովթաները,
- կենցաղային հրդեհները,
- գազի արտահոսքի հետևանքով հնարավոր պայթյունները:

Վերոնշյալ աղետների պատճառ կարող են հանդիսանալ բնակչության կողմից անվտանգության կանոնների ոչ բավարար իմացությունը, վառարաններից և կենցաղային տաքացուցիչ այլ սարքերից օգտվելու կանոնները խախտելը:

Տեխնածին աղետներից խուսափելու և այն նվազագույնի հասցնելու համար կարևորվում է տեղական հեռուստատեսության դերը՝ բնակչության շրջանում բացատրական աշխատանքների անցկացման և անվտանգության կանոնների իրազեկման հարցում:

Համայնքի տարածքում քիմիական վտանգավոր օբյեկտներ չկան:

ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը մշտապես պետք է գտնվի իրավասու մարմինների և համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրության ներքո:

Առաջին և ամենակարևոր պայմանը ռիսկերի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին: Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի

գործողության:

Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

Արդյունավետ են այս ուղղությամբ համայնքում անցկացվող ուսումնավարժանքները:

2017-2021թթ. համայնքում արտակարգ իրավիճակների կանխարգելման, բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1)Սելավատարերի մաքրում, հունների ամրացում.
2)Համայնքում առկա վթարային շենքերի քանդում, ամրացում.
3)Ներհամայնքայի ճանապարհների նորոգում, նրանց վրա գտնվող կամուրջների և ջրահեռացման կառուցվածքների վերականգնում.
4)Հանրակրթական դպրոցի նկուղային հարկերի մաքրում և վերանորոգում.
5)Կոյուղու համակարգի կառուցում.
6)Հակակարկտային կայանների տեղադրում.
7)Հանրակրթական դպրոցի շենքում հրշեջ հիդրանտների վերականգնում.
8)Համայնքի աղբավայրի կառուցապատում.
9)Գայլերի հնարավոր հարձակումներից պաշտպանելու ուղղությամբ միջոցառումների իրականացում.
10)Համայնքում ստեղծել դիզելային վառելիքի պահուստ՝ արտակարգ իրավիճակների դեպքերի կանխարգելման և դրանց հետևանքների վերացման աշխատանքների կատարման համար:
11)Համայնքում ստեղծել առաջին անհրաժեշտության պարագաների պաշարներ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած բնակչությանը առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելու համար.
12)Համայնքի բնակչության ազդարարման համար էլ. շչակների ձեռքբերում և տեղադրում:
13)Քաղաքացիական պաշտպանության ուսումնավարժական միջոցառումների ու ուսոցողական սեմինար-պարապմունքների անցկացում:
14)Սահմանված կարգով համայնքում ստեղծել աղետների ռիսկի նվազեցման համայնքային թիմ և ակտիվացնել համագործակցությունը <<Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի ու աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի հետ:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1.Համայնքի ռազմավարությունն է.

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Փոքր և միջին բիզնեսի զարգացման միջոցով ստեղծել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

2.2.Հիմնական նպատակները

- Ներհամանքային ճանապարհների վերանորոգում.
- Կոյուղու ցանցի կառուցում.
- Հեղեղատարների կառուցում, առկա կամուրջների ամրացում.
- Համայնքային կենտրոնի շենքին կից հանգստի գոտու կառուցապատում
- Ոռոգման ցանցի կառուցում.
- Գյուղացիական տնտեսությունների զարգացում և ֆերմերային տնտեսությունների հիմնում, գյուղատնտեսական տեխնիկայի նորացում, որակյալ սերմերի, բուժանյութերի, թունաքիմիկատների ապահովում.
- Հակակարկտային կայանքների տեղադրում.
- Տուֆ քարի արտադրության ընդլայնում, նոր աշխատատեղերի ստեղծում.
- Համայնքում գործարար նախաձեռնությունների խթանում, գյուղ. մթերքների վերամշակման փոքր և միջին ձեռնարկությունների հիմնում.
- Հիփոթեքային վարկերի միջոցով անհատական բնակարանային շինարարության խթանում.
- Անօթևանի կարգավիճակ ունեցող 21 ընտանիքներին բնակարանով ապահովում.
- Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում.
- Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն.
- Բնակավայի բարեկարգում, կանաչապատում, փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում.

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում առկա հիմնախնդիրները լուծելու, ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից և համայնքի սեփական եկամուտներից: Համայնքի

սեփական եկամուտների աղբյուրներն են՝ հողի հարկը, գույքհարկը, վարձակալության տրված համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարները, տեղական տուրքերն ու վճարները, ինչպես նաև համայնքի սեփականության գույքի օգտագործումից և օտարումից գոյացող միջոցները: Նախորդ 3 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են ……. տոկոսներով: Նշված ժամանակահատվածում բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել է ընթացիկ աշխատավարձերի վճարմանը, համայնքային կենտրոնի շենքի վերանորոգմանը, անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը, ճանապարհների վերանորոգմանը, համայնքում ծառայությունների մատուցմանը և ընթացիկ այլ ծախսերի կատարանը:

Համայնքում որոշակի դժվարություններ կան հողի հարկի և գույքահարկի ապառքների հավաքագրման գործում: Առ 01.01.2014թ. դրությամբ հողի հարկի և գույքհարկի մասով կուտակված ապառքները համապատասխանաբար կազմում են՝10137900 և 847500 հազ. դրամ:

Համայնք բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություններ չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Համայնքում կուտակված հիմնախնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է պետական մարմինների և հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Սեփական եկամուտների սահմանաձակ հնարավորությունների պայմաններում քառամյա ժամկետում համայնքի բյուջեի աճը ուղղակիորեն պայմանավորված է դոտացիոն գումարներց, պետության կողմից տրամադրվող նպատակային հատկացումների մակարդակից: համայնքի 2014 թվականին դոտացիան 2010թվականի համեմատությամբ աճել է …. տոկոսով:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալու հանրապետությունում գործող միջազգային ծրագրերի ու հիմնադրամների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի իրականացմանը, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից գոյացող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

3.2.ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

h/h	*Եկամուտի տեսակը*	*2014թ.*			*2015թ.*			*2016թ.*		
		Պլան	*կատ.*	*%*	*Պլան*	*կատ.*	*%*	*Պլան*	*կատ.*	*%*
	Եկամուտներ, ընդամենը	**7307900**	**8423400**	**115**	**7485300**	**8188600**	**109**	**8516600**	**7556200**	**88.7**
Ա	*Հարկային եկամուտներ*									
1	Հողի հարկ	**6027900**	**7221300**	**119**	**6030000**	**6189700**	**102**	**560000**	**4720000**	**84.2**

2	Գույքահարկ	1100000	1094000	99	1275300	1178500	92	17216000	1820500	105.7
3	Այլ հարկային եկամուտներ									
Բ	*Տուրքեր*									
1	Պետական տուրքեր									
2	Տեղական տուրքեր	180000	100000	60	180000	137000	76	180000	70000	38.8
Գ	*Ոչ հարկային եկամուտներ*									
1	Համայնքային սեփ.հող.վարձ/վճ	1015000	782500	77	1015000	6834000	67	1015000	945000	93.1
2	Գույքի վարձավճ.									
3	Տեղական վճարներ									
4	Այլ ոչ հարկային եկամուտներ									
5	ՏԻՄ-ին պետ. կողմ. լիազ. իր. հ. մ.									
Դ	*Պաշտոնական տրանսֆերտներ*									
1	Դոտացիա	13929400	1392940	100	15252200	15252200	100	17124900	17124900	100
2	Սուբվենցիա									
Ե	*Եկամուտներ, կապիտալի գործառնութ.*									
Զ	*Տարեսկզբի ազատ մնացորդ*	4891100			4322700			3857600		
Է	*Ֆոնդային բյուջե*									

3.3. ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

հազ. դրամ

N	*Ծախսի անվանումը*	*2014թ.*			*2015թ.*			*2016թ.*		
		պլան	*կատ.*	*%*	*պլան*	*կատ.*	*%*	*պլան*	*կատ.*	*%*
	Ընդամենը ծախսեր									
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	8114000	8114000	100	8146800	8146800	100	9596200	9596200	100
2	Պարգևատրում									
3	Սոց. ապահովության վճարներ	1363000	1363000	100	1482000	1482000	100	2399000	239900	100
4	Տրանսպորտային ծառայության վճարներ				1000000	1000000	100	1250000	125000	100
5	Էլ. էներգիայի ճախսեր	681	681	100	600	600	100	1262000	1262000	100
6	Այլ ծախսեր									

7	Գույքի և սարքավորում. վարձակալություն									
8	Համակարգչային ծառայություններ	30000	30000	100	30000	30000	100	30000	30000	100
9	Ըչ նյութական ակտիվների ձեռքբերում									
10	Ընթացիկ ներքին տանսֆերտների վճարներ									
11	Գրասենյակային նյութերի ակտիվների ձեռքբերում									
12	Այլ կոմունալ ծախսեր	750000	750000	100	300000	300000	100	1725000	1725000	100
13	Պահուստային ֆոնդ	2002300	2002300	100	3732500	3732500				
14	Այլ ծախսեր									
15	Գործուղումներ									
16	Կապի ծառայություն	70000	70000	100	80000	80000	100	60000	60000	100
17	Հարկեր, տուրքեր, վճարներ									
18	Մասնագիտական ծառայություն									
19	Սարքերի և սարքավորումների ձեռքբերում	150000	150000	100				259800	259800	100
20	Տրանսպորտային միջ. ձեռքբերման ծախսեր				4322600	4322600	100			
21	Ոչ պետական ֆինանսական հատկացումներ									
22	Նավթամթերք և բն. գազի ներդրում									
23	Շենքերի և շինությունների կառուցում				3323400	3323400	100	3296700	3296700	100
24	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ									
25	Շենքերի և շինությունների վերանորոգում	9170000	917000	100	982500	982500	100			
26	Դրամաշնորհ				9000000	9000000	100			

3.4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հազ. դրամ

Հ/հ	Եկամուտի տեսակը	2016թ փաստացի կատարված	2017թ. նախատեսված	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում
	Եկամուտներ,ընդհամենը					
Ա	Հարկային եկամուտներ					
1	Հողի հարկ	4720700	5700000	5700000	5700000	5700000
2	Գույքահարկ	1820600	2409600	2600000	3000000	3200000
3	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	180000	180000	180000	180000	180000

	Ոչ հարկային եկամուտներ					
1	Համայնքայի սեփ. հողերի վարձավճարներ	945000	1015000	1015000	1015000	1015000
2	Գույքի վարձավճարներ					
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Գ	Պաշտոնական տրանսֆերտներ,դոտացիա	17316200	20107800	21700000	22000000	23000000
Դ	Եկամուտներ, կապիտալի գործառնություններից					
Ե	Տարեսկզբի ազատ մնացորդ					
Զ	Ֆոնդային բյուջե					
	Բյուջեի կատարում/տոկոս/					

3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. դրամ

Ապառքի տեսակը	Ապառքը առ. 01.01.14թ. դրությամբ	Ապառքների հավաքրման կանխատեսում				Անհուսալի ապառքներ
		2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	
Հողի հարկ		1000000	1500000	2000000	2000000	
Գույքահարկ		200000	300000	200000	200000	
Հողի վարձավճար						

3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱՔՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. դրամ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Դոնոր կազմակեր-պության ներդրում /հազ. դրամ/	Համայնքի ներդրում /հազ. դրամ/	Կատարման ժամկետը /հազ. դրամ/
1.	ճանապարհ	2000000		2000000	2015
2	ջրագիծ	4000000		4000000	2016
3	լուսավորություն	2000000		2000000	2016

3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հազ. դրամ

N	Ծրագրի անվանումը	Իրականաց-նող կազմակեր-պությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	Այդ թվում		Իրական ացման տարեթի վը
				Դոնոր կազմակերպ.	Համայնքի ներդրում	
1						
2						
3.						
4.						
6.						
7.						

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2014- 2017թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրարերը՝

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ջիթհանքով-Զարինջա, միջհամայնքային և Ջիթհանքովի համայնքի միջհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են տրանսպորտային միջոցների համար:

Վերանորոգման աշխատանքների նկարագրությունը

1. Հանքակոպճի միջոցով փոսլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա Ջիթհանքով-Զարինջա միջհամայնքային 5 կմ երկարություն ունեցող ճանապարհից 1500գծ.մ. երկարության տարբեր տեղամասերի հատվածներ՝ 9000քառ.մ. ընդհանուր մակերեսով::
2. Անհրաժեշտ է մաքրել Ջիթհանքով-Զարինջա միջհամայնքային ճանապարհների եզրերի ջրահեռացման առվակները և իրականացնել ճանապարհների շրջակայքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներ: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 20 խ.մ. շինարարական և կենցաղայի աղբ:
3. Հանքակոպճի միջոցով փոսլցման և ավազե ծածկույթով հարթեցման են ենթակա Ջիթհանքով համայնքի առավել քայքայված և անանցանելի ներհամայնքային 3կմ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածները՝ 15000քառ.մ. ընդհանուր մակերեսով, այդ թվում՝.

Փողոց թիվ 2 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ.

Փողոց թիվ 3 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Փողոց թիվ 4 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Փողոց թիվ 5 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ.

Փողոց թիվ 6 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ.

Ընդամենը՝ 3000գծ. մ. մակերեսը՝ 15000քառ.մ.

Գյուղամիջյան ճանապարհների ջրահեռացումն ապահովելու համար ճամփեզրերին անհրաժեշտ է բացել 1500գծ.մ. ընդհանուր երկարության ջրահեռացման առվակներ՝ 50սմ լայնությամբ և 40սմ խորությամբ / ընդամենը՝ 100խ.մ/:

Անհրաժեշտ է իրականացնել վերանորոգվող ճանապարհների սանիտարական մաքրման, շինարարական և կենցաղային աղբի տեղափոխման աշխատանքներ: Սանիտարական մաքրման է ենթակա 50000քառ. մ. տարածք: Ըստ նախնական հաշվարկների անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 30 խ.մ. շինարարական և կենցաղայի աղբ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի փողոցները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ծրագրի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և նախագծանախահաշվային փաստաթղթեր :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումը ապահովել համայնքի բյուջեի միջոցներով: Ճանապարհների վերանորոգման և շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի քայքայված և անանցանելի ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծավալների նկարագրությունը

Հ/հ	*Միջհամայնքային և ներհամայնքայինտեղ ճանապարհներիի կեղամասերը*	*Տեխնիկական վիճակի նկարագրությունը*	*Անհրաժեշտ աշխատանքների նկարագրությունը և ծավալները*
1.	Ձիթհանքով-Զարինջա միջհամայնքային ճանապարհ	Ձիթհանքով-Զարինջա միջհամայնքային 5 կմ երկարություն ունեցող ճանապարհի 1500գծ.մ. երկարության 9000քառ.մ. ընդհանուր մակերեսով տարբեր տեղամասերը գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում: Առանձին հատվածներ մարդատար ավտոմեքենաների համար դարձել են անանցանելի	Հանքակոպճի միջոցով անհրաժեշտ է իրականացնել 1200ք.մ. տարածքի փոսլցման աշխատանքներ, որի համար կպահանջվի 240խ.մ. հանքակոպիճ, ավազե ծածկույթով անհրաժեշտ իրականացնել 9000ք.մ. տարածքի հարթեցման աշխատանքներ, որ համար կպահանջվի 200խ.մ. ավազ:

		Ճանապարհի շրջակայքերում առկա են շինարարական և կենցաղային աղբի կուտակումներ:	Անհրաժեշտ իրականացնել ճանապարհների շրջակայքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներ: Անհրաժեշտ է մաքրել և տեղափոխել մոտ 20խ.մ. կենցաղային և շինարարական աղբ:
2.	Չիթհանքով համայնքի ներհամայնքային ճանապարհներ	Ներհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում: Առավել քայքայված և անանցանելի են ներհամայնքային 3կմ. ընդհանուր երկարության ճանապարհահատվածները՝ 15000քառ.մ. ընդհանուր մակերեսով, առանձին տեղամասեր անանցանելի են տրանսպորտային միջոցների համար:	Հանքակոպճի միջոցով անհրաժեշտ է իրականացնել 1500ք.մ. տարածքի փոսլցման աշխատանքներ, որի համար կպահանջվի 200խ.մ. հանքակոպիճ, ավազե ծածկույթով անհրաժեշտ իրականացնել 15000ք.մ. տարածքի հարթեցման աշխատանքներ, որ համար կպահանջվի 200խ.մ. ավազ: Փողոց թիվ 1 – 700գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 3500քառ.մ. Փողոց թիվ 2 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ. Փողոց թիվ 3 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ. Փողոց թիվ 4 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ. Փողոց թիվ 5 – 400գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2000քառ.մ. Փողոց թիվ 6 – 500գծ.մ. լայնությունը՝ 5մ. մակերեսը՝ 2500քառ.մ. Ընդամենը՝ 3000գծ.մ. մակերեսը՝ 15000քառ.մ.
		Լցված են ներհամայնքային ճանապարհների 1500գծ. մ. ընդհանուր երկարության ջրահեռացման առվակները, փողոցների շրջակայքերում առկա են կենցաղային և շինարարական աղբակույտեր:	Անհրաժեշտ է մաքրել փողոցների եզրային 1500գծ. մ. ընդհանուր երկարության ջրահեռացման առվակները և փողոցների շրջակայքերի կենցաղային և շինարարական աղբակույտերը:

Չիթհանքով-Զարինջա, և Չիթհանքովի ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների իրականացման Ֆինանսական միջոցների գնահատում

Հ/հ	Աշխատանքների նկարագրությունը, նյութերի անվանումը,	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեքը /դրամ/	Ընդհանուր արժեքը /դրամ/	Նշումներ
	Տեխնիկական միջոցների շահագործում					
1	Էքսկավատորի շահագործում -Հանքակոպիճի բարձում՝ 660խ.մ. -Ավազի բարձում՝ 540խ.մ. -Շինարարական և կենցաղային աղբի բարձում՝ 50խ.մ.	ժամ	204	1200	245000	
2	Հանքակոպիճի տեղափոխում /Չիթհանքով -Մաստարա-Չիթհանքով - 15կմ/	խ.մ.	660	612.5	404250	
3	Ավազի տեղափոխում /Չիթհանքով -Լանջիկ - Չիթհանքով - 15կմ/	խ.մ.	540	612.5	330750	
	Ընդամենը՝ Տեխնիկական միջոցների շահագործում	X	X	X	980000	
	Աշխատանք					
4	Ճանապարհների եզրերի ջրահեռացման առվակների մաքրում	գծ.մ.	1500	X	X	Համայնքի ուժերով
5	Ճանապարհների շրջակայքերի սանիտարական մաքրում	ք.մ.	20000	X	X	Համայնքի ուժերով
	Ընդամենը աշխատանք	X	X	X	X	
	Նյութեր					
1	Հանքակոպիճ	խ.մ.	660	X	X	Անհատույց
2	Ավազ	խ.մ.	540	X	X	Անհատույց
3	Դիզելային վառելանյութ	լիտր	2647	340	900000	
	Ընդամենը նյութեր				*900000*	
	Ընդամենը նախահաշվով				*1880000*	

- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերի, տրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործումը ապահովելու համար համայնքի բյուջեից կատարել 1880.0հազ. դրամի ներդրում:
- Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումը իրականացնել համայնքի ուժերով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Չիթիանքով-Զարինջա, Չիթիանքովի ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման աշխատանքները իրականացնել 2018թ-ի 3-րդ, 4-րդ եռամսյակներում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Չիթիանքովի համայնքի ղեկավար՝ Հովիկ Պողոսյան,
Համայնքի ավագանու անդամներ:

ԾՐԱԳՐԻ ԱՋԱԿԻՑՆԵՐ՝

Համայնքի անդամներ:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Չիթիանքովի համայնքի հեղեղատարների մաքրում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքը շուրջ 2,5 կմ երկարության հեղեղատարները լցված են ջրաբերուկներով և կենցաղային աղբով: Լիարժեք ջրահեռացում չապահովվելու պատճառով հեղեղումների են ենթարկվում համայնքի առանձին թաղամասերի բնակելի տները, օժանդակ կառույցներն ու տնամերձ բանջարանոցները:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է մաքրել համայնքի 2.5 կմ ընդհանուր երկարության հեղեղատարները, առանձին հատվածներում կատարել հուների ու պատերի ամրացումներ, կանխել բնակելի տների, օժանդակ կառույցների ու տնամերձ բանջարանոցների հեղեղումները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Կազմավորել ծրագրի իրականացման աշխատանքային խումբ:

- Ուսումնասիրել հեղեղատարների մաքրման և հուների ամրացման աշխատանքների ծավալները, կազմել թերությունների ակտ և ծրագրային փաստաթղթեր:
- Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրով, որի համար կազմել հայտ-առաջարկ և այն մինչև 2011թ. մայիս ամիսը ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետարան:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցները ապահովել համայնքի բյուջեի և համայնքի անդամների ներդրումների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայքում կապահովվի նորմալ ջրահեռացում, կկանխվի բնակելի տների, օժանդակ կառույցների ու տնամերձ բանջարանոցների հեղեղումները:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 2.5մլն. դրամի ներդրում, որից 1.5մլն.դրամը նախատեսել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով, իսկ 1.0մլն. դրամը հատկացնել համայնքի բյուջեից: Ծրագրի իրականացման աշխատանքներին ներգրավել համայնքի բնակչությանը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2017-2018թթ. 2-րդ եռամսյակ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Չիթհանքովի համայնքի ղեկավար՝ Հովիկ Պողոսյան:

Ծրագրի աջակիցներ՝ համայնքի անդամներ:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Չիթհանքովի համայնքի մշակույթի տանը հարակից տարածքում հանգստի գոտու հիմնում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքը չունի հանգստի գոտի, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել համայնքի բնակչության հանգիստն ու ազատ ժամանցը: Մշակույթի տան հարևանությամ կա ընդհանուր օգտագործման 3000 ք. մ. տարածք, որ կարելի է կառուցապատել որպես հանգստի գոտի:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի բնակչության հանգիստի ու ազատ ժամանցի կազմակերպման համար համայնքում հիմնել հանգստի գոտի:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Կազմավորել ծրագրի իրականացման աշխատանքային խումբ:
- Կազմել հանգստի գոտու կառուցապատման ուրվագծային հատակագիծ և նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:
- Կազմել 3000 մարդ/օր ծավալի աշխատանքներ իրականացնելու համար հայտ առաջարկ և այն ներկայացնել ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրին:
- Ծրագրում ներառել հետևյալ աշխատանքները՝
  - տարածքի հարթեցում և ցանկապատում,
  - կանաչ գոտիների և անցուղիների կառուցապատում,
  - ծառատունկի իրականացում, սիզամարգերի կանաչապատում,
  - խաղատաղավարների կառուցում և նստարանների տեղադրում,
  - մանկական խաղերի տեղադրում,
  - ջրագծի անցակցում
  - հուշարձան աղբյուրի տեղադրում,
  - լուսավորության ցանցի անցկացում,
- Հանգստի գոտու պահպանության և խնամքի կազմակերպում:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի բնակչության հանգիստի ու ազատ ժամանցի համար կստեղծվեն հարմարավետ պայմաններ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների հանգստի գոտու կառուցման համար կպահանջվի 6մլն. դրամի ներդրում, որից 3000 մարդ/օր ծավալի աշխատանքները /3.0մլն. դրամ/ նախատեսել ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով, իսկ 3.0մլն. դրամը հատկացնել համայնքի բյուջեից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը իրականացնել 2017թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներին;

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Չիթիանքովի համայնքի ղեկավար՝ Հովիկ Պողոսյան:

Ծրագրի աջակիցներ՝ համայնքի անդամներ:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	Ցուցանիշը	Չափի միավոր	2009թ. փաստացի	2010թ. կանխատեսում	2011թ. կանխատեսում	2012թ. կանխատեսում	2013թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	2577.1	2577.1	2577.1	2577.1	2577.1
2	Բնակչության թիվը	մարդ	1552	1552	1552	1552	1552
3	Տն. տնտեսությունների թիվը	ընտ.	340	342	344	346	348
4	Ծնունդը		20	22	24	26	30
5	Մահացությունը	մարդ	10	*	*	*	*
6	Աշխատունակ բնակչություն.	մարդ	1038	1040	1042	1044	1050
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ	810	820	830	850	880
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ	686	700	710	720	730
	բ/արդյունաբերություն	մարդ	12	16	20	30	40
	գ/շինարարություն	մարդ	8	10	12	14	18
	բ/ ծառայությունների ոլորտ.	մարդ	40	42	44	46	50
	դ/այլ ոլորտներ	մարդ	64	52	44	40	42
8	Գործազրկության մակարդակը	%	18.7	17.1	16.2	15.5	15.1
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	4	5	5	6	7
10	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	2393.6	2393.6	2393.6	2393.6	2393.6
	այդ թվում վարելահողեր	հա	1533.8	1533.8	1533.8	1533.8	1533.8
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	100	100	100	100	100
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկայությունը	կմ	20.0	20.0	22.0	24.0	26.0
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	-
14	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	-	-	-	-	
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	20.0	20.0	20.0	20.0	20.0
16	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	20.0	20.0	14.0	12.0	10.0
17	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝	հատ բն./	270/ 33850	270/ 33850	275/ 34150	278/ 34600	280/ 3500

		ք.մ					
	-Համայնքային	հատ ք.մ	-	-	-	-	-
	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ	126 13200	126 13200	145 15480	145 15480	145 15480
18	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում	հատ	61	61	55	48	40
	Անօթևանի կարգավիճակ ունեցող	հատ	21	21	15	8	-
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/օր	140	140	140	140	140
20	Ջրի կորուստները ցանցում	%	10.0	10.0	5.0	3.0	0.0
21	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	215	204	2010	220	225
22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	0	0	70	70	70
23	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	6	6	16	16	16